

ՍՊԱՀԱՆԻ ՓԵՐԻԱ ԳՈՒԱՌԸ

(Ճայ ազգաբնակուրեան ընդհանուր նկարագիրը)

Փէրիա գաւառը, որ ընկած է Սպահանի արևմտեան կողմում, բաղկացած է բազմաթիւ գիւղերից: Սրանց 16-ը՝ Դօվլաթաբադ, Քրդեր, Նամակերտ, Ղառլզուն, Դրախտակ, Ղարամելիք, Միլակերտ, Շուրիշկան, Շահրուլազ, Խունկ, Բժիկերտ, Սոնզիրաբան, Խոյգեան, Դաջան, Հաղան և Բոլորան զուտ հայաբնակ են, 9-ը՝ Սվարան, Զիգեան, Խնկերտ, Աղիզեան, Բարդաղայ, Ներքին-Խոյգեան, Ազնաւուր, Հէզարջրիք և Փահրայ հայ և պարսիկ խառն են, իսկ մացեալները զուտ պարսկաբնակ:

Ամբողջ Փէրիա գաւառը ունի արգաւանդ գետին, առատ բուսականութիւն, ականակիտ աղբիւրներ ու զանաթներ-ջրանցքներ, ընդարձակ արօտատեղեր և վերջերս տնկուած այգիներ: Գիւղերից մի մասը «Խալէսէ»—արքունական է, մրւո մասը «առբարի»—կալուածատիրական: Խալէսէ գիւղերի բնակչութեամբ կճարում են միայն իրանց մշակած գետնի հարկը, իսկ ձեռք բերած բոլոր արգիւնքը մնում է իրանց: Սակայն առբարի գիւղերինը պարտաւոր են վճարել զիսահարկ և ստացած բերքերի «սէքուն»—երրորդական մասը: Շատ քիչ բացտութեամբ, բոլոր առբարի գիւղերի բնակիչները հարստահարւում ու կեղեցւում են իրանց առբարմերից անխիղճ կերպով:

Գաւառիս բոլոր հայերը ըստ 1901 թուի չնշագրութեան բաղկացած են 1522 ընտանիքից—11,146 անդամներով: Բնակւում են անյարմար տներում և մութ սենեակներում, որոնց պատերը շինուած են ցեխից, իսկ առաստաղը ճիւղերով ծածկուած գերաններից: բայցի միակ երթնեկելու դռնից, ուրիշ որեէ պատուհան, կամ լուսամուտ բանալու գաղափար չըկայ ընդհանրապէս: Ամեն սենեակ անպայման կերպով ունի իր թոնիքը:

և երդիկը, Ընդունարանի անհրաժեշտ զարդարանքն են կազմում յատակին գուռած մի քանի կտոր գորդերը և անկիւնում բազմեցրած զէլանը՝ իւր սարք ու կարգով, ուրիշ ոչինչ, իսկ զիշերը սրանց վրայ աւելանում է և նահապետական ձիթի ճրագը:

Տղամարդիկ հազնւում են պարսիկ գիւղացու տարազով—երկար արխալուզ, լայն գօտի, լայն վարտիկ, չարուխ կամ «զիվա» կոչուած տեղական տրեխ և թաղիքից պատրաստուած փափախ—իսկ կանայք՝ Հայաստանի գիւղերից բերած հին տարազով են. Ամեն բանում և մանաւանդ զգեստի կողմից, ամբողջ գաւառում բացառութիւն կուղբող համարեա թէ չը կայ:

Բարբառը բաւական մօտ է Արարատեան գրական բարբառին, խօսում են շատ մաքուր և պարզ արտասանութեամբ: Ծաղրում են նոր-ջուղայեցիներին, սրանց մի քանի տափակ արտասանութիւնների և ծոմուած բառերի համար: Բոլոր խօսակցութիւնները համեմած են լինում ո. գրքից բերան արած վկայութիւններով:

Համարեա բոլոր գիւղերում, ուր գտնւում է քիչ-շատ գրել-կարդալ իմացող «տիրապու», այնտեղ կայ և դպրոց, «որը բաղկացած է մի մութ սենեեկից, մի քանի աշակերտներից, մէկ երկու կտոր թաղիքից և մի քանի կտրառուած ու գզգուած այբբենարան-սաղմոսից, իսկ Նամակերտ, Սանդիբարան և Խոյգեան կենտրոնական գիւղերինը՝ քիչ-շատ նման են դպրոցի թէ շինութեան և թէ դասաւութեան կողմից: Ուսման առարկաներն են՝ կրօն, գրաբար հայերէն, պարուկերէն և անուամբ և եթ թուաբանութիւն: Վերջերս այս դպրոցներում դասաւանդուում է նաև Հայոց պատմութիւնը՝ Նամակերտ գիւղում բացուած է նաև օրիորդաց դպրոց, ուր յաճախում են 50-ի չափ ոտարորդիկ աղջիկներ, մի ինչ որ ամբացուից «գրքի սև ու սպիտակը սորելու»:

Թաւրիզից «Մշակ»-ին թղթակցող մի ոմն՝ պ. Ս. նոյն լրագրի սոյն տարուայ 127-րդ համարում գրել էր ի միջի այլոց և հետեւեալը.

«Միջնակարգ դպրոցի կարիքը զգալի է դառնում՝ մանաւանդ այն պատճառով, որ գաւառների համար հարկաւոր են ուսուցիչներ, մանաւանդ այնպիսի ուսուցիչներ, որոնք մանէին աւելի խուլ անկիւնները (ուր նոյն իսկ հայր իր մայրենի լեզուով խօսել անզամ չը գիտէ, օրինակ Սուլդուզը, Սպահանի գիւղերը) ամեն տեսակ արգելքների յաղթէին և մեր խորթացած եղբայրներին սովորեցնէին իրանց մայրենի լեզուն»:

Առաջարկութիւնը ըստ ինքեան աւելի քան ցանկալի է, և մենք էլ երկրորդում և երրորդում ենք պ. Ս.-ին. սակայն Սպա-

հանի բռլոր գիւղերում դուք չէք տեսնի պ. Ա.-ի «մայրենի լեզուով խօսել անզամ» ը գիտցող հայրնակիչներ Աւրեմն թող ներուի ինձ տաել, որ այս լուրը բոլորովին անհիմն է:

Այսգեան, Սանգիրարան և մանաւանդ Նամակերտ գիւղերի եկեղեցական երգեցողութիւնը գերազանցում է նոյն-իսկ Նոր-Ձուղայի եկեղեցիներին. Ունին կանոնաւոր ձայնագրագէտ միաձայն երգեցիկ խմբեր, որոնք իրենց համերաշխ երգեցողութեամբ զարմանք են պատճառում այսկեր օտարականին:

Շատ գտահ են և աներկիւղ Սովորական բան է տեսնել նոյն-իսկ պարսիկների հետ խառն բնակուող գիւղերում. մի հայ կին, կամ աղջիկ մեն մենակ արտը ննձելիս, կամ պարսապիցը ձեռքին՝ ճնճուկ քշելիս թող արիւնը աչքն առնի նա, որ կը համարձակուի մօտենալ կամ անքաղաքավարի վերաբերուել այդ մենաւոր գեղջկուհուն, բնութեան այդ հաբազադաւակին:

Անչափ կրօնամոլ են թէկուզ աշխարհ քանդուելու լինի, կրօնական ոչ մի աննշան պարտականութիւնը զանցառութեան չեն տալ թէկուզ ամենածանր հիւանդութեամբ բռնուած լինին, այնուամենայնիւ օրապատերը և շաբաթապատերը չեն ուսումն Պատահեց մեզ այցելել մի առն, ուր զիփտերիտով բռնուած մի 10 տարեկան տղայ սաստիկ նեղուում էր, այնպէս որ, խօսել անդամ դժուարանում էր, Երբ զիմեցին մեզ, խորհուրդ տուինք, դոնէ տաք պահել, վեսակար ուաելիքներից հետու և միայն կաթով ու ձուով կերակրել Մէկ էլ լսում ենք. «Տօն էտէնց էլ բան կը լինի, ո՞վ է տեսել Վարդվառի պասին կաթ ու ձու ուտել». Հէ, Աստուած որ ուզի փրկի, կը փրկիս եւ իրաւ, ոչ ծնողները և ոչ ինքը՝ տղան համաձայնուեց «պասը կոտրելու Հետեանքը բնականարար այն եղաւ, որ մինչև մեր վերադարձը, դեռ խելզ երեխան տանջւում էր»:

Անչափ սնահաւատ ենու նախապաշարուած: Ոչ բժիշկ ունին, ոչ դեղ զործածելու դաղափար, որովհետեւ ամենակին հաւատ չեն ընծայում մարդկային հնարներին: Դրանց դէվիզն է «քան-բան Աստուած»: Եթէ ամբողջ օրերով էլ քարոզես և փաստերով ապացուցանես, դարձեալ երկնքին նայելով կասեն, «մարդուս ումբրը Էնտեղից կտրուած չը լինի հա, եթէ ոչ մարդս ինչացու ա, որ կարնայ մի բան անելու, իրանց խելքով բժշկութիւն անելուց առաջացած գտանզները սովորական բառ են. օրինակ հիւանդ յզի կնոջ իրը թէ «ազտուել» կամենալով փորին են իրիւմ. սորիան ընականարար ծննդիր փոխարէն մահն են շտապեյնում: Աչքացաւով բռնուածի աչքերը երբեմն

բռնոթի ածելով՝ առողջացնելու փոխարէն աւելի ևս կուրայ-
նում են, և այն, և այն, Որեէ համարակակ հիւանդութեան
ժամանակ «մեղք» կամ «Աստծու գէմկոփւ» համարելով զգու-
չութիւնը երբէք փոյթ չեն տանում տան միւս անդամներին հե-
ռու պահել հիւանդից, և այսպէս իրարից վարակուելով կոտոր-
ւում են անխնայ, Մեր ներկայութեամբ մի բազմանդամ ընտա-
նիքից այս ամառ մէկ ամսուայ ընթացքում դիմարերտով մե-
ռան 12 հոգի: Մի տնից 3, 4, կամ 5 մեռնողներ սովորա-
կան են: Ցածախ մարդ պատահում էր այնպիսի աների, որոնց
բոլոր անդամները մեծից մինչև փոքրը աշքացաւով կամ տենդով
էին բռնուած: Միակ միջոցը, որ գործ է ածւում հիւանդի հա-
մար, դանակով «աղօթել» ու կամ «մոմ խալեր» ու կախարդա-
կան սովորութիւնն է: Ասենք, գիւղացին այնքան էլ մեղք չու-
նի այս միջոցները գործադրելու մէջ, քանիոր տեղիս՝ նոր-
ջուղայի Ս. Կատարինեան կուսանայ Վանքի միարաններից
ումանք էլ արձակ-համարձակ նոյն բանն են անում, և ինեղծ
ժողովրդի հաւատը հարստահարելով՝ աւելի նախապաշարում
նրան:

Առանին կեանքը մեզ յիշեցնում է նահապետական դարը:
Ամեն մի տուն բաղկացած է մի քանի եղբայրների ընտանիքից.
մինչև որ այլ ևս հօար չի լինում միասին ապրելը, երբէք
չեն բաժանուում միմեանցից: Շատ ընտանիքներ բաղկայած են
25-40 անդամներից: Ամուսնացնում են զաւակներին շատ վազ:
Ասենք, վերացրել են մասամբ օրորոցի նշանագրութիւնը, սա-
կայն 16 տարեկան տղան և 14 տարեկան աղջիկը արդէն ար-
բունքի հասած են համարւում և հետեապէս «հարսնիքի ժուգն
(Ժամանակն է)»: Սովորական բան է նաև 14-16 տարեկան
տղային ամուսնացնել 20-22 տարեկան աղջկայ հետո Որովհետե
ծնողներն իրենց զաւակներին ամուսնացնում են, շատ անգամ
իրանց բան ու գործին մի աշխատող ձեռք աւելացնելու համար:
Երբեմն տան մեծ հարսները իրանց օգնական բերելու համար՝
այսպէս են ստիպում ամուսիններին, նրանց փոքր եղբայրնե-
րին ամուսնացնելու: «Աիր, ես ինչ մեղք եմ արել, որ տան
կով ու կիթն, արտի զամ ու քամը, երիսեքանց զոռ ու բէ-
գեարը ողջ իմ վզին ընկած ընսի: Աստուած պահի ախպէրդ՝ հա-
հասել է, պսակել տուր, էլի, ոնց որ ախպէրդ քեզ, էնէնց էլ
հարսն ինձ քօմակ կընիք:

Ծիծաղելի ընտանեկան սովորութիւններ ունին, երեխա-
ներն իրենց մայրերին ամայրիկա չեն կոչում, այլ «հարսի», իսկ
տան միւս հարսներին «ինամոնց աղջիկա»: Շատ անգամ նոյն-
իսկ այդքանն էլ են զլանում ասելու, այլ կանչում են ուզդակի

այն զիւղի անունով. որտեղից հարս են բերել, օրինակ, «Հյառագունցի», քեզ ևմ առումն, «Վայդանցի», էսդին մտիկ տուրք և այլն Կինարմատը մինչև 70-80 տարեկան հասակը շը հասած, իրաւունք չունի տղամարդկանց հետ խօսել, կամ նրանց ներկայութեամբ նստել Աղջկայ ուրախութիւնն և աղատութիւնը մինչև նրա նշանուելն է Մինչև այդ ժամանակն, իրաւունք ունի խօսել, առն հարսների համար թարգման գառնողը և այն և այլն, ապկայն նշանուելուց և մանաւանդ ամուսնանալուց յետոյ՝ պէտք է մնաք բարի ասի բոլոր նոյն-իսկ անմեղ զուարձութիւններին անգամ և զլիի մի համար կոյտ՝ պատառանքի հետ միասին «Եամշաղ»—քնթակալ կապած՝ գառնայ անխօս մումիա Սիր «Ճանիլ զայիֆի» (կնոջ) համար այիր (պակասութիւն) և խօսալը ու մարդամէջ երեալը։ Այսպիսով մեր ողորմելի կանայք ստիպուած են իրանց միաքը նշանացի ձեերով արտայայտել։ Այն աստիճան են խեղճերը հաշտուել իրանց կեանքի այս անբնական ձեի հետ, որ ատելով ատում են նոր ջուղայեցի կանանց, որովհետեւ սրանք թէ քնթակալ չեն գործ ածում և թէ մարդկանց ներկայութեամբ խօսում են. «Տօ, հողն զայ զլիիս, բաց ոեիներով ոնց չեն ամինում մարդու մօտ երեւար։ Չեն բարեհաճում մինչև անգամ խօսել հետները, «Ախր բաց ոեխով զայիֆէն էլ ինչ հայեա-շարմ (ամօթ) ունի» որ հետն էլ գեռ խօսեն։

Նորահարմները պարտական են իրանց նոր գնացած տանը գտնուող բոլորին, և տարեկանից մինչև ծերունիներին, ծառայել որպէս սպասաւոր, որպէս վարձկան աղախին։ Պատահել է մեղ տեսնել ութին տարեկան մի տղայ հրամայելիս իրանց տան 30 տարեկան մի հարսին, «Տօ, հարսի, մի քիչ ջուր բի (բեր)», և որովհետեւ տանը պատրաստի ջուր չի եղել խեղճ հարսը ստիպուած է եղել զազել մօտակայ աղբիւրը ծանր գորակով ջուր բերել և իր տագեր տղայի, կամ թոռան ծարաւը զովացնել, թերելիս, ամենայն խոնարհութեամբ հեռուից զլուխ տալով՝ մատուցել է ջուրը, ստիպայն ինքնարաւական լակուր ամանը վերադարձնելով և վերջին երկրպագութիւնն էլ բնդունելով, փոխանակ սովորական ռուրախ ապրեսն ասելու, բաւականացել է միայն մի կոպիտ նկատողութիւն անել հա, ոսդ էր կոտրուել, թէ զնացելիք նոր աղբուր բանալ։

Մի երիտասարդ հօր համար միծ այիրս է հօրը ներկայութեամբ իր երեխային սիրելն, այլ պէտք է վարուի այնպէս, ինչպէս կը վարուի մի օտարական, մի անձանօթ մարդ։ Նոյնպէս և մի հարսի համար երբէք վայելուչ չէ մեծերի ներկայութեամբ իր մօտ ազգականին, կամ նոյն-իսկ ծնողներին տես-

նելիս՝ ժպտերես բարեկել, կամ ողջութիւնը հարցնել, այլ պէտք է սովորական երկրպագութիւնը տայ և թողնի անցնի, որպէս օտարական մէկը:

Չը տեսնուած բան է կանանց և տղամարդկանց միասին ճաշելը, կամ թէյ խմելը. որովհետեւ ուտելու և խմելու համար հարկաւոր է իջեցնել քնթակալը, և այդ աշխարհիս անկարելի բաներից և անպատուարեր երեսոյթներից մէկն է համարուած մեր հայ շինականի խելքով: Մի անզամ, երբ շատ ստիպեցինք մի հարսի մեր ներկայութեամբ թէյ խմել խեղճը «քաղցի պարոնի խաթրը չը կոտրելու համար» առանձնացաւ նոյն սենակի մէկ անփիւնը և յետեր դէպի մեր կողմն դարձնելով միայն գիշաւ ահ ու դողով դատարկել թէյի բաժակը:

Գիւղերից ոմանք թաղուած են խոր տգիտութեան մէջ, չնորհիւ իրանց նման տգէտ, իսկ անկարգութեամբ գերազանցող քահանաների ու ոչյաների: Այսպիսի գիւղերի եկեղեցիները ներկայացնում են ուղղակի գայթակղութեան վայր: Միլակերտ գիւղում, ինչպէս հաւատացնում էին, մի աննշան պատճառով քահանաները յարձակում են միմեանց վրայ եկեղեցում, ժողովրդի ներկայութեամբ և զորս դու պատուերեցեր խփում միմեանց և փետառում մօրուքները: Շուրիշկան գիւղը, որ Պարսկաստանի թեմում ուխտագնացութեան սիրահար հայի միակ ուխտատեղին է, և որի գրչագիր աւետարանով *) երդում են նոյն իսկ մահմեղական բախտիարիները, ընկած է ծայրայեղ աղքատութեան և աւերակ դրութեան մէջ: Միիթարական ոչինչ չը կայ այստեղ: Մինչև անցեալ՝ 1901 թիւը, այս արդիւնաբեր աւետարանի հասոյթը հերթով յափշտակւում էր գիւղայիներից, իսկ եկեղեցին օր ըստ օրէ քանդուում ու աւերտում: Միայն այս տարի, տեղիս հոգևոր իշխանութեան չնորհիւ, այդ հասոյթները յատկացուեցին եկեղեցուն, այս կարգադրութեամբ միայն՝ յուսալի է ապադայում ունենալ ուխտաւորների իջնելու տեղ և ըստ կարելոյն չնորհին եկեղեցի: Դրամի կողոպտելը դեռ ոչինչ: Կողոպտելիս են եղել և այն եկեղեցական անօթները ու նուէրները (օր. թաշկինակ, մետաքսեայ ծածկոցներ, զարդեր և ազն), որոնք նուիրաբերուած էին լինում ջերմեռանդ ուխտաւորներից: Այս կերպ աւազակութիւնից յառաջացած՝ եկեղեցու մի շարք անշքութիւնից պատմենք մէկը: Մեր ներկայութեամբ ուխտ կատարելիս, ջուրը օրհնեցին ասիական

*) Բոլոր գիւղերն ունին իրանց առանձին եկեղեցին և համարեա բռնու եկեղեցիներում գտնուում են գրչագիր հին աւետարաններ, որոնցից ոմանք մինչև ութին հարիւր տարուալ հնութիւն ունին:

Դալաքների գրպանի մի կեղտուա ջամի մէջ, որից և խմեցին թեղծ ուժաւորմերը, այն ինչ մի քանի անգամ տեղիցս՝ Նոր Ձուղայից արծաթեայ քանդակուած զաւաթներ են նուիրուած եղել Հակառակի պէս, բոլոր զաւառի ամենատգէտ քահանաներն էլ այս գիւղումն են գտնուում, կարծես վերոյիշեալ անկարգութիւնները կատարեալ զարձնելու համար, Վարդավառ կիրակին, երբ այստեղի եկեղեցում պատարադ տեսնելու դրավաղդութիւնն ունեցանք, տեսնենք ինչ, զեռ բաւական մնացած մինչև պատարագի վերջանալը, յանկարծ արձակեցին եկեղեցին մոմերը հանգցրին և ժողովուրդը սկսեց դուրս քաշուել, միայն մեր բողոքի վրայ զիջան շարունակել ընդհատուած պատարագը Բանից դուրս եկաւ, որ միշտ, այդպէս են արել և այդպէս էլ վարժեցրել ժողովրդին:

Մի ուրիշ գիւղում՝ Ազնաւուլում եկեղեցին ոչ խաչկալ ունի, ոչ անհրաժեշտ գրքեր Անզաւուարեր է մանաւանդ Զիգեան գիւղինը, որ տեղիս «Ազգ» երկուս—դպրոցներ»-ի սեպհականութիւնն է, առանց խաչկալի մի սեղան, մի քանի կաւէ աշտանակներ, մի քանի կտոր փալաս փուլուսներ և վերջացաւ Տեղիս՝ Նոր-Ձուղայի բոլոր եկեղեցիններում թափուած են մի քանի տամնեակ անգործածական աշտանակներ և այլ անօթներ, պատկերներ ու զգեստներ, միթէ չէ կարելի դրանցից մի քանիմ ուղարկել նոյն թեմի գիւղերի չքաւոր եկեղեցիններում գործ ածելու, միթէ ութերորդ ամանու չափ մեղք» կը լինի նուիրատուի համար, այդ իրերը փոխանակ փոշուուած ու ժանգուուած թափելու անօթատների անկիւններում, ուղարկել գիւղերը:

Անհրաժեշտ է և մենք պարագ են համարում հրաւիրելու թեմիս հոգեոր իշխանութեան լուրջ ուշազրութիւնը, այս զաւառի եկեղեցիների բարեզարդութեան, քահանաների բարեկարգութեան և ժողովրդի լուսաւորութեան վրայ. Մեզ ամեննին չեն զարմացնում վերոյիշեալ զեղծմունքները և ոչ էլ բարկացնում Ախր ինչ ենք տուել գիւղերին, որ հիմա ինչ իրաւունք ունենանք պահանջելու Այսքան տարիներ, չասեմ դարեր, թեմիս հոգեոր իշխանութիւնը ինչ է արել ինեղ զիւգացիների յառաջադիմութեան դործում, որ քարոզիչն է ուղարկել, որ այցելու հովիւը, որ հաշուետեսր, որ քննիչը, զեռ շատ լաւ է որ այսպանն էլ կայ.

Թեմիս առաջնորդարանը մինչ այժմ ամեննին ուշազրութեան չի արժանացրել այս ինեղ զիւղերի մասին հոգալը, այլ բաւականացել է միայն չորչոր կոնդակներով ու նամակներով այս ու այն հրամանները արձակել, որոնք երբեմն գործադրուել

են, երբեմն ոչ Միայն այժմեան թեմակալ արք-եպիսկոպոս՝ Սահակ Սյվատեանն է, որ այս տարի առաջին անգամ հիմք դրեց այս կարեոր գործին, և որպէս այցելու հովի՛ ուղարկեց այս զիւղերը շրջելու Ամենափրկչեան վանքի միաբան՝ Եղնիկ վարդապետին որ և ունեցաւ իր բարերար հետեանքը ընդհանուր առմամբ, թէ եկեղեցիների տումարները ստուգելու և կարգի բերելու և թէ այլ և այլ անհատական վէճերի առաջն առնելու գործի մէջ, Շնորհաւորում ենք այս նոր երեսիթը և մաղթում, որ լինի յարատե ու արդինաւոր:

ՏԻԳՐԱՆ ԱԲԳԱՐԵԱՆ

Հակոբ Մքեր, 1902.